# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՆԻԿՈԼԱՅ ՌԻԺԿՈՎԻՆ

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Դաշնային ժողովի Դաշնային խորհրդի անդամ, ՀՀ ազգային հերոս Նիկոլայ Ռիժկովի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի:

Ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը նշեց, որ երկու երկրների հարաբերություններն առանձնանում են յուրահատուկ ջերմությամբ ու եղբայրության ոգով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես ուրախություն հայտնեց փիար Նիկոլայ Ռիժկովի այցի համար՝ ընդգծելով, որ վերջինս տասնամյակներ շարունակ իր ջանքերն է ներդնում երկու ժողովուրդների դարավոր բարեկամության ու երկրների համագործակցության առավել արդյունավորման համար: Այս առիթով Նորին Սրբությունը հայ ժողովրդի անունից շնորհակալություն ու գնահատանք հայտնեց Ն. Ռիժկովին՝ հայ ժողովրդին մատուցած բարի ծառայությունների համար՝ ընդգծելով 1988 թ. երկրաշարժի օրերին նրա զորակցությունը Հայաստանին եւ կարեւոր ներդրումը Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդրում:

Տիար Նիկոլայ Ռիժկովն իր հերթին ընդգծեց Ս. Էջմիածին այցելության կարեւորությունը, ապա անդրադարձավ երկու երկրների, ժողովուրդների եւ եկեղեցիների միջեւ առկա հարաբերություններին: ՀՀ ազգային հերոսը վերհիշեց նաեւ երկրաշարժի օրերին իր հանդիպումը երջանկահիշատակ Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Երկնավոր Տերն իր օրհնության ներքո պահի ու պահպանի երկու բարեկամ ժողովուրդներին եւ բարի արդյունքներով արգասավորի նրանց համագործակցությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Ն. Ռիժկովը Մայր Աթոռում